

ԲՈՒՅՍԵՐԸ

Մարդը բույսերի հետ կապված է ծագման, զարգացման ու գոյության միջավայրի միասնականությամբ: Բույսերն ու կենդանիները միմյանց հետ կապված են նաև սննդային շղթայի օղակներով: Իսկ Վ. Վերնադսկու կենդանի նյութի ֆիզիկաքիմիական միասնականության օրենքից բխում է նաև, որ բույսերի ու կենդանիների բջիջներում ընթանում են միանման կենսաքիմիական պրոցեսներ:

Դեռևս 1782 թվականին Սենեբյեն իր փորձերով ապացուցեց բուսական և կենդանական օրգանիզմների փոխկապակցվածությունը: Դա արտահայտվում է բույսերի ասիմիլացիոն գործունեությամբ, որը կենդանիներին ապահովում է սնունդով և ուղեկցվում է թթվածնի անջատումով: Իսկ կենդանիների շնչառության ժամանակ անջատված ածխաթթու գազը կլանվում է բույսերի կողմից և օգտագործվում է օրգանական նյութերի սինթեզման համար:

Ասվածից բխում է, որ կենդանի օրգանիզմները մթնոլորտի հետ անընդհատ գտնվում են գազափոխանակման մեջ: Երկիր նոլորակի «կենդանի նյութը» ունի գազային ծագում այն իմաստով, որ այն սինթեզվում է իմանականում մթնոլորտի տարրերից: Դա Դյունային և Բուսենգոյին հիմք է տվել օրգանական աշխարհն անվանել «մթնոլորտի հավելված»: Յարկ է նշել, որ բուսական և կենդանական օրգանիզմների անընդհատ կենսաքիմիական գործունեությունը հսկայական նշանակություն ունի մթնոլորտի գազային կազմի կարգավորման գործում: Թթվածինը մեծ դեր է խաղում երկրակեղին քիմիական տարրերի վերափոխման գործում: Որոշ մետաղների և մետալիդների (հատկապես Fe, Mn, S և C) օքսիդացման ժամանակ կապվում է մեծ քանակությամբ ազատ թթվածին, որը կարող է կտրուկ ազդել մթնոլորտի ազատ թթվածինի պարունակության վրա: Այդուհանդերձ, «մոլորակի ազատ թթվածին քանակը մնում է անփոփոխ կամ համարյա անփոփոխ»: Այդ կայունությունն ապահովվում է բույսերի ֆոտոսինթետիկ գործունեությամբ:

Ելնելով օրգանական աշխարհի միասնական պատկերացումներից՝ Զ. Դարվինը իր «Բույսերի շարժվելու ունակությունը» (1880 թ.) հետազոտության մեջ նշում է, որ բույսերին, որպես կենդանի եւակներ, բնորոշ են կյանքի բոլոր իմանական առանձնահատկությունները, այդ թվում նաև գրգռականությունը: Օրինակ, ամորթսած միմոզան ի պատասխան մեխանիկական գրգռի (ձեռքի թերևակի հպում) ծալում է իր տերևները: Այդ ժամանակ նրա բջիջներում առաջանում է էլեկտրական պոտենցիալ, որը բուսական բջջաթաղանթում տեղի ունեցող էլեկտրական պրոցեսի՝ ապաբեռացման արդյունք է:

Բուսական բջիջների թաղանթների ապարևեռացման շնորհիվ գրգռի արագ փոխանցումը, որն ուղեկցվում է էլեկտրական պոտենցիալների առաջացմամբ, շատ ընդհանրություններ ունի կենդանիների նյարդաթելերով իմպուլսների փոխանցման հետ: Այդուհանդերձ, բույսերի գրգռականությունը տարբերվում է նրանով, որ արտաքին տարաբնույթ ազդակներին բույսերը պատասխանում են իրենց բջիջներում ընթացող կենսաքիմիական գործնաբաների, սննդան կամ ձևաբանական փոփոխություններով: Երևի հենց այդ կենսաքիմիական փոփոխությունները նկատի ունենալով է հայ մեծ բժշկապետ Ամիրդովլաթ Անասիացին իր աշխատություններում հորդորում դեղաբույսերը հավաքել սարերում, առավոտյան ժամերին: Նա շեշտում է, որ դա պետք է անեն չամուսնացած աղջիկները, բորբիկ ոտքերով: Չինաստանում ևս ընդունված է թեյը հավաքել առավոտյան, անպայման ձեռնոցներով՝ օգտագործելով ոսկե մկրատ: Այստեղ էլ դա պետք է անեն չամուսնացած աղջիկները:

Առավոտյան, բորբիկ ոտքերով, ձեռնոցներով, չամուսնացած աղջիկներ: Այս պայմանները արդյո՞ք

մբնոլորտի, բույսի, հողի, լուսի, մարդու միջև եղած կապի մասին չեն վկայում: Այդ կապն անշուշտ գոյություն ունի, որի վկայությունն է նաև այն, որ հյուսիսկովկասյան որոշ ազգեր լավ գինի ստանալու համար խաղողաքաղի ժամանակ նույնիսկ մոտերքում արգելում են կանանց ներկայությունը:

Կ. Ա. Տիմիրյազել (1912 թ.), զարգացնելով Զ. Դարվինի մոտեցումները բույսերի գրգռականության վերաբերյալ, «ֆիտոհոգեբաններին» գգուշացնում է խուսափել ծայրահեղություններից, քանի որ վերջիններս բույսերին վերագրում էին «գիտակցություն» և նույնիսկ «կամքի ազատություն»: Նրանք գտնում էին, որ կա որոշակի կապ մարդկանց ու բույսերի միջև, որ նրանց միջև գործում է իմֆորմացիայի փոխանակման ինչ-որ մեխանիզմ: Ըստ Երևանի, հենց այդ կապի գոյության սկզբունքով են կազմվել մարդու և ծառերի փոխհարաբերությունը ընդգծող հորոսկոպները, այս կամ այն բույսերն ու ծաղիկները տանն աճեցնելու կամ այն արգելելու խորհրդականությունը: Պարզվել է, որ տնային բույսերը ոչ միայն մաքրում են բնակարանի օդը, այն հարստացնում թթվածնով, գեղագիտական հաճույք պատճառում տանտերերին, այլև ակտիվորեն «միջամտում են» նրանց ընտանեկան օրույցներին: Կատարել են այսպիսի մի փորձ. բույսին ամրացրած էլեկտրոդները միացրել են գրանցող սարքին: Սենյակում գտնվող մարդիկ սկսել են բանավիճել տարբեր հարցերի շուրջ, որի ժամանակ բույսը «անտարբեր» է եղել, բայց երբ մարդիկ սկսել են խոսել սիրային թեմաներով, սարքը սկսել է գրանցել տատանումներ, որոնք արտահայտել են բույսի «վերաբերմունքը» այդ խնդրի նկատմամբ:

Աֆրիկյան կղզիներից մեկում անանասի հրաշալի բերք է աճեցվում: Մեկ այլ երկրի գործարարներ այստեղից սածիլներ են գնում՝ ակնկալելով անանասի լավ բերք ու հաջող բիզնես: Սակայն սպասումները չեն արդարանում. ստացվում են մանր, անհամ, խղճուկ պտուղներ: Ֆիրման հասնում է սնանկության եզրին: Ենթադրում են, որ պատճառը բույսի տեղափոխությունն է, որ նոր պայմանները նրա համար բարենպաստ չեն: Բայց ֆիրմայի հոգեբանը հանկարծ իշշում է, որ բույսի «հայրենիքում» դաշտում աշխատողները երգում էին, երբեմն էլ՝ պարում: Նույնը փորձում են իրենց մոտ և ստանում հրաշալի բերք:

Պարզվում է, որ բույսերը կարող են նաև «խոսել»: Բուլղարացի Վանգան, որը մանկուց կույր էր, զբաղվում էր ոչ միայն գուշակություններով, այլև բուժում էր մարդկանց դեղաբույսերով, որոնք անձանք էր հավաքում: Այն հարցին, թե ինչպես է ճանաչում բույսերը, նա պատասխանում է. «Երբ անցնում եմ բույսի կողքով, այն ինձ ասում է, թե ինչ հիվանդություն կարող է բուժել»:

Երևի հնում մեծ համբավ վայելող բժիշկները ևս օժտված են եղել բույսերի «լեզուն» հասկանալու շնորհով: Այլապես դժվար է կարծել, որ նրանք բազմաթիվ բույսերի բուժիչ հատկությունների իմացությանը տիրապետում էին մարդկանց վրա փորձերի ու սխալների մեթոդը կիրառելով:

Բազմաթիվ փորձերի տվյալներից ելնելով՝ ներկայումս կարելի է անդել, որ բույսերն ունեն «զգացնունքներ», «հիշողություն», «հույզեր»:

1966 թվականին ամերիկացի գիտնական Ջիվ Բաքսերը նկատեց, որ էլեկտրական դիմադրություն չափող սարքին միացած բույսերը արձագանքում են որոշ իրադարձությունների: Ավտոմատ սարքը մեկ առ մեկ եռացող ջրի մեջ էր զցում մանր խեցգետնիկների և միաժամանակ գործի էր դնում կողըի սենյակում գտնվող բույսերին էլեկտրոդներով միացած ինքնագրիչը: Խեցգետնիկների ջրի մեջ ընկնելու պահին սարքը գրանցում էր բույսի հետ կատարվող էլեկտրական փոփոխությունները, որը նա անվանեց «սարսափի ճիչ»: Երբ ավտոմատը ջրի մեջ նետում էր

սատկած խեցգետնիկ, բույսը մնում էր անտարբեր¹:

Իսկ ի՞նչ է զգում, ի՞նչ է «մտածում», ի՞նչ ապրումներ է ունենում անտառը, այդ հսկա կանաչ օրգանիզմը, եթե վերջին 15-20 տարիներին օրնիբուն սղոցում ու կացնահարում են նրա մարմնի անդամները: Կարելի է պատկերացնել, թե ինչ «վայնասուն» է բարձրանում անտառում, եթե այնտեղ հայտնվում են որսորդներ ու անտառահատներ:

Կատարվել են բազմաթիվ փորձեր, որոնք ապացուցում են բույսերի, կենդանիների ու մարդկանց միջև ինֆորմացիոն կապի գոյությունը:

Ակադեմիկոս Պ. Պ. Գորյակի լաբորատորիայում ստեղծվել է հատուկ սարք, որը կարողանում է ուժեղացնել սովորական բառերի շեշտադրումը: Դրա արդյունքում փորձարարի արտասանած ցանկացած բառ բուսաբաններին լավ հայտնի արաբիդրասիս բույսի սերմերի կողմից ընկալվել է որպես վիրավորանք: Փորձի արդյունքները գերազանցել են սպասումները: Բույսի հասցեին ասված հայինյանքը թողել է 40 հազար ռենտգեն ճառագայթման հավասար ազդեցություն, որի հետևանքով խզվել են ՂՆԹ-ի շղթաները, քայլայվել են քրոնոսումները: Սերմերի մեջ մասը դրա հետևանքով չեն ծլել, իսկ ծլածները գենետիկական շեղումներ են ունեցել:

Այս փորձը հաստատում է, որ ցանկացած կենդանի էակի՝ այդ թվում նաև բույսի հասցեին ուղղված վիրավորական խոսքերը խախտում են նրա բնականոն կենսագործունեությունը և նույնիսկ գենետիկական ապարատը՝ դատապարտելով նրան հիվանդությունների և նույնիսկ մահվան: Իսկ բարի, ջերմ խոսքերը ոչ միայն կարող են բարձրացնել տրամադրությունը, այլև օգնել ազատվելու հիվանդություններից ոչ միայն նրան, ում ուղղված են այդ խոսքերը, այլև ասողին:

Գիտնականները խոսքի և մտքի ազդեցության այս ֆենոմենը փորձում են բացատրել: Գտնում են, որ յուրաքանչյուր բառը, միտքը խախտում է մեզ շրջապատող ֆիզիկական վակուումը, և նրանում առաջանում են տորսիոն (ոլորուն) դաշտեր, որոնք իրենցից ներկայացնում են աջ ու ձախ պտույտի մրրիկներ: Փորձերով պարզվել է, որ աջ պտույտի դաշտերը ծագում են բարի խոսքերից ու մտքերից և օրգանիզմների վրա բարերար ազդեցություն են ունենում, իսկ ձախ պտույտի դաշտերը՝ չար մտքերից ու հայինյանքից և կործանարար են:

Բույսերն ընդգծված վերաբերմունք են ցուցաբերում նաև երաժշտության նկատմամբ: Այսպես, իինք ոչ մեծ ջերմոցներում աճեցրել են եգիպտացորեն, դդում և ծաղիկների մի քանի տեսակներ: Բոլոր ջերմոցներում հողի, ջրի, լուսի, ջերմության պայմանները նույնն էին, սակայն մի քանի ամիսների ընթացքում մի ջերմոցում հնչում էր Բախի, մյուսում՝ հնդկական դասական երաժշտություն, երրորդում՝ ծանր ռոք, իսկ չորրորդում ամերիկյան քանթրի ոճի երաժշտություն: Դիմգերորդ ջերմոցը ստուգիչ էր, այնտեղ երաժշտություն չէր հնչում: Շուտով պարզվեց, որ Բախի և հնդկական դասական երաժշտությունը արագացրել են բույսերի աճը: Ծաղիկներն այստեղ առատ էին, իսկ բույսերի ցողունները նույնիսկ ձգվել էին դեպի ծայնարկիչի կողմը: Երրորդ ջերմոցում բույսերին ռոք երաժշտությունը դուր չէր եկել. ծաղիկներն այստեղ քիչ էին, կարծես բույսերն աճելու ցանկություն չունեին: Քանի երաժշտության նկատմամբ բույսերն անտարբեր էին մնացել այնպես, ինչպես հինգերորդ ջերմոցի բույսերը, որտեղ երաժշտություն չէր հնչել:

Դեն Կառլսոնը, որն այսպես կոչված «հնչյունի ծաղկման» գաղափարի հիմնադիրն է, երկարատև դիտարկումներից հետո պարզեց, որ որոշ երաժշտական հնչյուններ կամ մեղեղիներ կարող են խթանել բույսերի աճը, որ բույսերը առավել լավ աճում են վաղ առավոտյան, եթե թռչումները երգում են: Դրանում համոզվելու համար նա երաժշտական գործիքների միջոցով

¹ Валентинов А. Злоредное действие бранных слов. // Невероятное, любопытное, очевидное. 1998, № 3, ்ப. 7.

ստեղծեց թռչումների երգ հիշեցնող մեղեդի, որը բույսերին «դուր եկավ»²:

Մեկ այլ դիտարկում թույլ է տալիս պնդելու, որ բույսերը և նրանց սերմերը ընդունակ են որոշակի ինֆորմացիա ընդունել շրջապատից և փոխանցել:

Ամբողջ կյանքը Տայգայում ապրած, բնության հետ ամբողջություն կազմող և նրա օրենքներն առավելագույնս հասկացող բնիկները խորհուրդ են տալիս բույսի սածիլները հողի մեջ դնելուց առաջ մի քանի րոպե բորբոք ոտքերով կանգնել սածիլների համար արված փոսի մեջ: Նրանց պնդմանը՝ այդ դեպքում բույսն աճման ընթացքում հողից կվերցնի այն սմնդարար նյութերը, որոնք անհրաժեշտ են տվյալ մարդու առողջությունն ապահովելու համար: Այդ դեպքում նույն հողուն տարբեր մարդկանց կողմից սածիլված միևնույն բույսը ունենում է միանգամայն տարբեր համեր, քանի որ բորբոք ոտքերի միջոցով մարդը հողին ինֆորմացիա է հաղորդում իր օրգանիզմի մասին: Նույն մարդիկ խորհուրդ են տալիս նաև ցանելուց առաջ սերմերի մի մասը մի քանի րոպե պահել բերանում, որի ընթացքում մարդը թքի միջոցով սերմին տեղեկություն է փոխանցում իր օրգանիզմի ֆիզիոլոգիական վիճակի մասին: Այս ամենն առաջին հայացքից տարօրինակ կարող է թվալ, բայց չէ՝ որ հնում մեր նախնիները ևս գութանով հողը վարում էին բորբոք ոտքերով, երևի ոչ միայն ոտնամաններ չունենալու պատճառով:

Ներկայացված նյութը թույլ է տալիս համոզված ասելու, որ մարդկանց ու բույսերի միջև գոյություն ունի ոչ միայն տարածքային, այլ նաև «հոգեբանական» ու ֆիզիոլոգիական կապ, չէ՞ որ Աստված բոլոր կենդանիներին ու մարդուն բուսակեր ստեղծեց. «Ահա ձեզ տուեցի ողջ Երկրի վրա տարածուած սերմանելի բոլոր բույսերի սերմերը և իրենց մեջ պտուղ սերմանելու սերմ պարունակող բոլոր ծառերը: Դրանք թող ձեզ համար սնունդ լինեն, իսկ բոլոր կանաչ խոտերը Երկրի բոլոր գազանների, Երկնքի թռչումների և Երկրի վրա սողացող բոլոր սողունների՝ բոլոր կենդանիների համար թող լինեն կեր» (Ծննդոց 1: 29-30):



Բովանդակություն

² **Дон Кэмпбелл, Эффект Мочарта.** Минск, изд-во Попурри, 1999, հօձ.101.